«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Բարոյական դաստիարակությունը որպես սանի արժեքային համակարգի ձևավորման միջոց

Դաստիարակ՝ Հակոբյան Սուսան

Մանկապարտեզ՝ Ախուրյանի «Լեռյի » մանկապարտեզ ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

Ներածություն 3

ԳԼՈՒԽ 1. Բարոյական դաստիարակության տեսական հիմունքները որպես արժեքային համակարգի ձևավորման միջոց 5

1.1 Բարոյական դաստիարակության էությունը 5

ԳԼՈՒԽ 2 Հետազոտության ընթացքը 10

Պարապմունքի պլան 10

Եզրակացություն 13

Օգտագործված գրականության ցանկ 14

Ներածություն

Բարոյական դաստիարակության խնդիրը մշտապես հետաքրքրել է հասարակությանը: Հատկապես հիմա՝ նոր ժամանակներում, երեխաների մոտ առավել տարածված են եսասիրությունն ու բռնությունը: Այսպիսով, բարոյական դաստիարակության խնդիրը գնալով ավելի արդիական է դառնում:

Բարոյական դաստիարակությունը երիտասարդ սերնդի մոտ բարձր գիտակցության, բարոյական զգացմունքների և վարքագծի զարգացման նպատակաուղղված գործընթաց է՝ բարոյականության իդեալներին և սկզբունքներին համապատասխան:

Բարոյական դաստիարակության էությունը հոգեպես զարգացած անհատականության ձևավորման մեջ է: Արժեհամակարգի ձևավորումը սերտորեն կապված է անհատի դաստիարակության, նրա սոցիալականացման հետ: Այս գործընթացում որոշիչ դերը սովորաբար վերապահվում է ընտանիքին և ուսումնական հաստատությանը, սակայն անհատին շրջապատող սոցիալական միջավայրը ևս ոչ պակաս կարևոր է:

Բարոյական դաստիարակությունը բարոյական գիտակցության ձևավորման, բարոյական զգացմունքների զարգացման և բարոյական վարքագծի հմտությունների ու սովորությունների ձևավորման նպատակային երկկողմանի գործընթաց է:

«Երեխային դաստիարակելիս կարևոր է ապահովել, որ բարոյական ճշմարտությունները ոչ միայն հասկանալի լինեն, այլև դառնան յուրաքանչյուր մարդու կյանքի նպատակը, սեփական ձգտումների և անձնական երջանկության առարկան»:

Բարոյական կրթությունը անձի զարգացման կարևոր օղակ է: Ուստի վաղ տարիքից մեծահասակների առջև բարոյական մարդ դաստիարակելու խնդիրն է դրված:

Կրթության հիմքը, որը պայմանավորում է բարոյական զարգացումը, երեխաների միջև հումանիստական հարաբերությունների ձևավորումն է՝ անկախ կրթական աշխատանքի բովանդակությունից, մեթոդներից և ձևերից: Ցանկացած բարոյական որակի դաստիարակության մեջ կիրառվում են դաստիարակության

տարբեր միջոցներ: Բարոյական դաստիարակության ընդհանուր համակարգում կարևոր տեղ են զբաղեցնում բարոյական դատողությունների, գնահատականների, հասկացությունների ձևավորմանը, բարոյական համոզմունքների դաստիարակությանը միտված միջոցների խումբը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել բարոյական դաստիարակությունը որպես սանի արժեքային համակարգի ձևավորման միջոց: Հետազոտական աշխատանքի արդյունքում կարող ենք տեսնել, թե բարոյական դաստիարակությունը սանի արժեքային համակարգի ձևավորման գործում ինչպիսի նշանակություն ունի:

Հետազոտական աշխատանքի խնդիրն է հասկանալ ինչպես արդյունավետ կազմակերպել բարոյական դաստիարակությունը որպես երեխաների արժեքային համակարգի ձևավորման միջոց:

Աշխատանքը կազմված է ներածությունից, երկու մասերից, եզրակացությունից, և գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. Բարոյական դաստիարակության տեսական հիմունքները որպես արժեքային համակարգի ձևավորման միջոց

1.1 Բարոյական դաստիարակության էությունը

Մորալ կամ բարոյականություն բառը ներմուծվել է Ցիցերոնի կողմից: Լատիներեն mores նշանակում է հասարակական բարքեր, չգրված կանոնն:

Բարոյական վարքի ընկալումը և ճիշտ գործելու ունակությունը մեծապես կախված են այն միջավայրից, որտեղ երեխան մեծանում է[1]: Բարոյականությունը ճիշտ և սխալ մտադրությունների, մտքերի, գործողությունների և պահվածքի միջև տարբերությունը տեսնելու ունակությունն է: Սա դաստիարակության ամբողջ գործընթացի հիմնական նպատակն է: Երեխայի բարոյական զարգացումը կապված է բարոյականության հասկացությունների հետ, որոնք երեխան սովորում է մանկությունից և ամբողջ հասուն տարիքում:

Բարոյական դաստիարակությունը գործընթաց է, որն ուղղված է երեխայի անհատականության ամբողջական ձևավորմանն ու զարգացմանը: Բարոյական դաստիարակության գործընթացում երեխաների մոտ ձևավորում է հայրենասիրության, ընկերասիրության զգացում, ակտիվ վերաբերմունք իրականության, խոր հարգանք աշխատող մարդկանց նկատմամբ: Բարոյական դաստիարակության խնդիրն է, որ ուսուցիչները փոխակերպեն հասարակության սոցիալապես անհրաժեշտ պահանջները յուրաքանչյուր երեխայի անհատականության համար ներքին խթանների, ինչպիսիք են պարտականությունը, պատիվը, խիղճը, արժանապատվությունը[2]:

Բարոյականությունը երեխայի կարողությունն է՝ սովորելու ճշտի կամ սխալի միջև տարբերությունը և հասկանալու, թե ինչպես կատարել ճիշտ ընտրություն[3]: Ինչպես զարգացման մյուս կողմերում, բարոյականությունը չի ձևավորվում ինքնուրույն: Երեխաների տանը ունեցած փորձառությունները, նրանց շրջապատող

---

[1] https://erexa.am/blog/erexayi-baroyakan-dastiarakutyuny-himnakan-pulery/ 28.11.23

[2] А.З. Рахимов, Роль нравственного воспитания в формировании личност, Классный руководитель. 2001

[3] https://www.mentalhelp.net/moral-development/#:~:text=Morality%20is%20our%20ability%20to,areas%20we%20have%20been%20discussing. 29.11.23

միջավայրը և նրանց ֆիզիկական, ճանաչողական, զգացմունքային և սոցիալական հմտությունները ազդում են ճշտի և սխալի նկատմամբ նրանց զարգացող կարողությունների վրա:

Ինչպես բարոյական վարքի սովորույթների դաստիարակումը, այդպես էլ բարոյական գիտակցման ձևավորումը բարդ գործընթաց է և ձեռք է բերվում մի շարք մեթոդների օգտագործումով: Դրանց միջոցով է դաստիարակը հասնում այն բանին, որ երեխաները գիտելիքներ յուրացնեն բարոյականության և նրա կանոնների մասին, նրանց մեջ ձևավորվի բարոյական պատկերացումների, հասկացությունների և արժեքների համակարգ:

Դաստիարակության հոգեբանությունը, բացահայտելով անձի բարոյական ոլորտի, բարոյական գիտակցության, բարոյական պատկերացումների, հասկացությունների սկզբունքների, համոզմունքների, արարքների բարոյական հիմքերը, բարոյական սկզբունքները, սովորույթների ու վարքի եղանակների հոգեբանական մեխանիզմները, ի հայտ է բերում մանկության տարբեր փուլերում դաստիարակչական պրոցեսի տարիքային բնութագրերն ու առանձնահատկությունները, մանկավարժական ներգործության ուղիների անհատական տարբերակները[4]:

Անձի արժեքային համակարգի ձևավորման և շարժընթացի խնդիրը ընդունված է դիտարկել հոգեկան զարգացման ընդհանուր օրինաչափությունների համատեքստում[5]: Այն անմիջականորեն կապված է տարիքային զարգացման առանձնահատկությունների հետ: Վերլուծելով անձի իմաստային ոլորտի ձևավորման և զարգացման խնդիրը՝ Ա.Սեռին պնդում է, որ այդ գործընթացները արտացոլում են տարիքային և անձնային զարգացման ընդհանուր օրինաչափությունները:

Վաղ տարիքից երեխաների լավ վարքագիծը կարևոր է: Երեխաները լավի և վատի բարոյական արժեքներ չգիտեն: Այս պատճառով դաստիարակները կարևոր դեր են խաղում բնավորության ձևավորման և երեխաների անհատականությունը

[4] Ա. Պետրովսկի, «Տարիքային և մանակվարժական հոգեբանություն» Երևան 1977
[5] Ն. Զեյնալյան, Անձի արժեհամակարգի ձևավորման աշխարհայացքային նախադրյալները, Երևան, 2020

զարգացնելու գործում[6]: Սա նշանակում է, որ դաստիարակները պետք է ունենան մեծ հոգի, շնորհք և համբերություն երեխաների հետ աշխատելու համար:

Առաջին բանը, որ անում են դաստիարակները բարոյական դաստիարակության մեջ, դա կարողանալ դիպչել երեխաների սրտի նուրբ լարերին, սիրվել երեխաների կողմից:

Նշենք այն հիմնական արժեքները, որոնք պետք է մշակվեն մանկապարտեզներում՝



Բարոյական դաստիարակության համար հաջողությամբ կարելի է կիրառել խաղը, քանի որ երեխայի համար խաղն ունի կարևոր նշանակություն: Ինչպես երեխան խաղում է, այդպես էլ՝ լինում է նաև աշխատանքում, երբ մեծանում է: Ահա ինչու ապագա մարդու դաստիարակումը նախ և առաջ սկսվում է մանկական խաղերից: Իսկ մանկապարտեզում նպատակային խաղերի կազմակերպումը պետք է կատարվի մի շարք պահանջների հաշվառումով, դրանց պահպանմամբ: Խաղերի գլխավոր նախաձեռնողները դաստիարակներն են, որոնք լրջորեն պետք է մտածեն ոչ միայն խաղերի տեսակների մասին, այլև դրանց դաստիարակչական նշանակության մասին: Սակայն դա չի նշանակում, թե մանկավարժը պետք է խաղը պարտադրի երեխաներին: Նա պետք է կարողանա ներգրավի երեխաներին, կազմակերպի խաղը: Դրա համար անհրաժեշտ է հաշվի առնել խաղի մասնակիցների տարիքային,

[6] https://www.ijicc.net/images/Vol_14/Iss_3/14378_Rukiyati_2020_E_R1.pdf 29.11.23

անհատական և ֆիզիկական առանձնահատկությունները: Խաղի դերերի բաշխման ժամանակ պետք է առավելագույնս բավարարել ամեն երեխայի սպասելիքները՝ նրան դնելով այնպիսի վիճակում, որն ամենից արդյունավետն է՝ նրա հնարավորությունների տեսանկյունից:

2-3 տարեկանում երեխան սկսում է հասկանալ, որ այլ մարդիկ նույնպես իրավունքներ և կարիքներ ունեն: Այնուամենայնիվ, նա դեռ տեղյակ չէ ճիշտ և սխալ տարբերության մասին: 2-3 տարեկան հասակում մի փոքրիկ երեխան կարող է իրեն մեղավոր զգալ և հավատարիմ մնալ բարյացակամ բարոյական վարքին[7]:

Ելնելով ծնողների արձագանքից՝ երեխան հասկանում է նրանց հնազանդվելու անհրաժեշտությունը, քանի որ.

- երեխան գիտի, որ վատ է խաղալիքներ խլել կրտսեր եղբորից, քանի որ ծնողները կարող են պատժել նրան դրա համար,
- նա չի հասկանում, թե ինչու պետք չէ հասակակիցներին հրել, բայց նա գիտի, որ դրա համար կպատժվի,
- պատժից խուսափելու համար երեխան սովորաբար հետևում է սահմանված կանոններին:

3-5 տարեկանում երեխան որդեգրում է ընտանեկան արժեքներ:

- քանի որ ընտանիքում կարգուկանոնն անհրաժեշտ է կանոններն ու կանոնակարգերը, դրանք կարևոր են դառնում երեխայի համար,
- երեխան ակնկալում է, որ ծնողները կամ այլ մեծահասակները վերահսկեն իրավիճակը,
- նա հասկանում է երեխայի և մեծահասակների դերը և ակնկալում է, որ մեծահասակները նրան վերահսկեն,
- նա հասկանում է, որ գործողությունները հետևանքներ ունեն:

[7] https://erexa.am/blog/erexayi-baroyakan-dastiarakutyuny-himnakan-pulery/ 28.11.23

Բարոյական կրթությունը կատարում է մի քանի կրթական գործառույթ[8]՝

- ❖ լայն պատկերացում է տալիս մարդկային կյանքի և մշակույթի բարոյական արժեքների մասին,
- ❖ ազդում է բարոյական գաղափարների, հասկացությունների, տեսակետների, դատողությունների, գնահատականների ձևավորման և դրա հիման վրա բարոյական համոզմունքների ձևավորման վրա,
- ❖ նպաստում է երեխաների սեփական բարոյական փորձի ըմբռնմանը և հարստացմանը,
- ❖ նպաստում է անհատի բարոյական ինքնակրթությանը

[8] Л.И. Божович., Т.Е. Конникова Нравственное формирование личности школьника в коллективе, Москва, 2000

ԳԼՈՒԽ 2 Հետազոտության ընթացքը

Հետազոտական աշխատանքն անցկացվել է կրտսեր առաջին խմբում: Խմբում կա 15 երեխա: Այս պարապմունքին եղել են 2 դիտարկողներ՝ տնօրենը և մեթոդիստը:

Պարապմունքի պլան

Թեման – Ա. Խնկոյանի «Պապն ու շաղգամը» հեքիաթը

Նպատակը՝

- Զնավորել երեխաների մոտ գեղագիտական արժեքներ, գնահատի գեղեցիկը, բարին և ճշմարիտը,
- Նպաստել, որ երեխաները գիտակցեն իրենց տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ, լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք,
- Նպաստել, որ երեխաներն լինեն մարդասեր, հանդուրժող,
- Սովորեցնել թիմային աշխատանք,
- Սովորեցնել երեխաներին գնահատեն իրենց ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը:

Անհրաժեշտ պարագաները՝

Տարբեր հերոսների կերպարներ, շաղգամ, մատիտներ, պաստառներ:

Ընթացքը՝

Մինչև դերային խաղը սկսելը երեխաների հետ վերհիշում ենք «Պապն ու շաղգամը» հեքիաթը : Երեխաներին տալիս եմ պարզ հարցեր՝

- Ինչ էին ուզում հողից հանել,
- Ով էր ցանել շաղգամը,
- Ովքեր եկան օգնության շաղգամը հանելու գործում,
- Ով եկավ վերջում օգնության:

Հարցերին պատասխանելուց հետո բաժանում եմ մատիտներ և պաստառներ, որ յուրաքանչյուր երեխա նկարի կերպարից որևէ մեկին: Որպեսզի բոլոր երեխաները մասնակցություն ունենան յուրաքանչյուր կերպարից մեկի փոխարեն վերցնում ենք մի քանիսը:

Նկարելը օգնում է, որ երեխաներն արտահայտեն իրենց հույզերն ու ապրումները: Իսկ վերջում միացնելով պաստառները ստանում ենք ամբողջական հեքիաթի պատկերը:

Այնուհետև երեխաները իրականացնում են փոքրիկ բեմականացում: Կերպարների բաժանման ընթացքում հաշվի եմ առել երեխաների կարծիքը, հասկանալու համար իրենց նախասիրությունները:

<<Պապն ու շաղգամը>> հեքիաթը դերային խաղի ձևով անցկացման նպատակն է բարոյական դաստիարակության տարրերի զարգացումը երեխաների մեջ: Դերային խաղը կնպաստի, որ երեխաները գիտակցեն ինչքան կարևոր է մեկը մյուսին օգնելը, հասկանան նույնիսկ չնչին թվացող օգնության կարևորությունը:

Ինքս ուղղություն եմ տալիս խաղին, չխանգարելով այն, պահում եմ խաղի ինքնուրույն և ստեղծագործական բնույթը, միջամտում է միայն այն դեպքում, երբ խաղը ոչ ցանկալի ուղղությամբ է գնում:

Խաղի ավարտից հետո ընդհանրացնելեով երեխաների համար ամփոփում եմ հեքիաթի հիմնական իմաստը: Հարցնում եմ հավանեցին խաղը, կուզենան արդյոք կրկին կազմակենք նման խաղեր:

Դաստիարակը ունի հատուկ առաքելություն երեխայի մեջ սերմանի բարություն, ընկերասիրություն, ազնվություն և սրանց ընդհակառակ նվազեցնի եսակենտրոն լինելու ձգտումները:

Կարող եմ ասել նշված թեման կնպաստի զարգացնել սովորողների ճանաչողական, ստողծագործական մտածողությունը, հաղորդակցական, համագործակցային և ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները:

Վերջնարդյունքներ՝

- Ընկալի և կիրառի ընդհանրացնող բառեր,
- Օգտագործի պարզ նախադասություններ,
- Հաղորդակցվի հասակակիցների հետ՝ արտահայտելով միտքը, զգացմունքները խոսքային և ոչ խոսքային միջոցներով,
- Մասնակցի խաղերի,
- Հետևի խաղի կանոններին:

Կապը չափորոշչի հետ՝ Շ(բ,գ), ԽՀ(ա,բ, դ), Ի(ա,գ) , ՀԶՍ(ա,բ, ե), ԻԱԱ(ա):

Եվ այս ամեն նպաստեց երեխաների մոտ հետևյալ կարողունակությունների զարգացմանը՝

- ❖ լեզվական և հաղորդակցության կարողունակություններ,
- ❖ ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություններ,
- ❖ ժողովրդական և քաղաքացիական կարողունակություններ,
- ❖ մշակութային կարողունակություն:

Պարապմունքին ներկա էին տնօրենը և մեթոդիստը: Ըստ վերջիններիս կարծիքի, մեջբերված է հաջորդիվ՝

- ❖ Դաստիարակի կողմից կիրառված մեթոդներն և հնարներն ապահովեցին պարապունքի արդյունավետությունը:
- ❖ Դաստիարակը կարողացավ երեխաների մեջ սերմանել շրջապատող մարդկանց նկատմամբ հոգատարություն, բառապաշարի զարգացում, մարդասիրության, բարության դաստիարակում, բարի գործ կատարելու պատրաստակամություն:
- ❖ Դաստիարակը կարողանում էր հավասարապես ուշադրություն դարձնել բոլոր երեխաներին:
- ❖ Պարապունքը նպաստեց զարգացնել երեխաների մոտ ընկերասիրության, փոխզիջման կարողություններ:

Եզրակացություն

Այսպիսով, հետազոտական աշխատանքի արդյունքում կարող եմ ասել, որ բարոյական դաստիարակությունը շատ կարևոր դերակատարություն ունի սանի արժեքային համակարգի ձևավորման գործում :

Կրտսեր խմբում ելնելով տարիքային առանձնահատկություններից կիրառել եմ դերային խաղ մեթոդը պարապունքն ավելի արդյունավետ լինելու նպատակով: Սանները խաղի ընթացքում ակտիվ էին, համախմբված, փորձում էին օգնել մեկը մյուսին: Ինքս ևս փորձում էի ներգրավեի բոլորին: Խաղի ավարտին երեխաներն հասկացան, որքան կարևոր է միասնական լինելը:

Դաստիարակներին հետագա աշխատանքների ընթացքում խորհուրդ եմ տալիս բարոյական դաստիատակության նպատակով հաճախակի կազմակերպել դերային խաղեր և ընթացքում ուշադիր լինել երեխաների վարքագծերին:

Օգտագործված գրականության ցանկ

- Ա. Պետրովսկի, «Տարիքային և մանակվարժական հոգեբանություն» Երևան 1977
- Ն. Զեյնալյան, Անձի արժեհամակարգի ձևավորման աշխարհայացքային նախադրյալները, Երևան, 2020
- А.З. Рахимов, Роль нравственного воспитания в формировании личност, Классный руководитель. 2001
- Л.И. Божович., Т.Е. Конникова Нравственное формирование личности школьника в коллективе, Москва, 2000
- https://erexa.am/blog/erexayi-baroyakan-dastiarakutyuny-himnakan-pulery/ 28.11.23
- https://www.ijicc.net/images/Vol_14/Iss_3/14378_Rukiyati_2020_E_R1.pdf 29.11.23
- https://www.mentalhelp.net/moral-development/#:~:text=Morality%20is%20our%20ability%20to,areas%20we%20have%20been%20discussing. 29.11.23